



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ
ԲՆԱՊԱՌԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«30 04 2019թ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 22

Զեռնարկողը՝

«ՎԱՐՄԱԾ» ՍՊԸ

Ք. Վանաձոր, Գործարանային 15

Գործունեությունը՝

Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի երևակումում
2019թ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության
աշխարհանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայփ

Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Ղոնոյան

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 22

«30 » 04 2019թ.

**Տավուշի մարզի Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի
երևակումում 2019թ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«Վառմաշ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ և կից
փաստաթղթեր /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Տավուշի մարզի Խաշթառակ համայնք

Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի երևակումը վարչական տեսակետից գտնվում է Տավուշի մարզի Խանանի տարածաշրջանում, մարզկենտրոն Խանանից մոտ 9.0կմ հարավ-արևելք, Աղստև գետի ստորին հոսանքի ավազանում, Խաշթառակ համայնքի վարչական սահմաններում:

Երևակումը գտնվում է Աղստև գետի և վերջինիս ծախակողմյան Գետահովիտ վտակի միախառնման տեղից մոտ 5.0կմ հարավ-արևելք, Երևան-Խանան-Նոեմբերյան ավտոմոբիլային ճանապարհի հարևանությամբ և զբաղեցնում է 0.78հա մակերես տարածք, որի բացարձակ նիշերը տատանվում են 574-575 մ սահմաններում: Երևակումը տեղակայված է Աղստև գետի ողողահունում: Ուսումնասիրության համար հայցվող տարածքը գտնվում է Աղստև գետից նվազագույնը 10մ հեռավորության վրա:

Խաշթառակի երևակման ավազակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական խճի և ավազի, ինչպես նաև ճանապարհաշինարարական պաստառահումքի արտադրության համար: Երևակման օգտակար հանածոն իր որակական հատկություններով պետք է բավարարի ՌՕԾ 8267-95 'Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար' և ՀԱՏ ՌՕԾ 8736-2014 'Ավագ շինարարական աշխատանքների համար' տեխնիկական պահանջներին համապատասխան վերջնաարտադրանքների ստացումը:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն Երկրաբանահանույթային երթուղիների, հետախուզահորերի անցման և համապատասխան նմուշարկման աշխատանքների համալիրով:



Օգտակար հանածոյի որակական հատկությունների (ֆիզիկատեխնիկական ցուցանիշների) ուսումնասիրությունները կիրականացվեն մասնագիտացված լաբորատորիայում: Կկատարվեն նաև օգտակար հանածոյի քիմիական, պետրոգրաֆամերալոգիական ուսումնասիրություններ:

Նախատեսվող աշխատանքների կատարման արդյունքում օգտակար հանածոյի, արդյունաբերական կարգով սպասվելիք պաշարները կազմեն մոտ 27հազ. մ³:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է 1.0հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ: Երևակման 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի 1.0կմ:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V կարգի ամրության ապարներում, 27մ ընդհանուր ծավալով:

Նախատեսվում է 6 հետախուզահորերի անցում, որոնց խորությունը նախատեսվում է 3.5-4.5 մ, կտրվածքը՝ 1.5 մ²:

Երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո հետախուզահորերը ենթակա են լցման, որը նախատեսվում է իրականացնել ծեղքով: Լցման աշխատանքների ընդհանուր ծավալը կազմելու է 45 մ³:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը կազմի 30.0մ:

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ընթացքում, դաշտային պայմաններում երեք կետում որոշել բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածը, ինչպես նաև հումքի փիրեցման գործակիցը:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից: Նախատեսվում է վերցնել 6 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար, 3 նմուշ քիմիական անալիզների և 3 նմուշ միներալոգ-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար: Նմուշարկումը կիրականացվի քերծման եղանակով՝ օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, քերծվածքի կտրվածքը՝ 0.3x0.1մ չափերով: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափոկ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 30 կգ-ի:

Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Ավագակոպճային խառնուրդի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման նպատակով նախատեսվում է հետազոտվող երևակման տարածքից կատարել փորձնական հանույթ՝ մոտ 300մ³ ծավալով, այն կենթարկվի վերամշակման գոյություն ունեցող ջարդիչ-տեսակավորման արտադրամասում, որի ընթացքում կմշակվի ավագակոպճային խառնուրդի հարստացման տեխնոլոգիան, կճշտվի ԱԿԽ-ի գրանուլումետրիական կազմը: Վերոհիշյալ աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեխանիկական եղանակով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել երևակման ապագա շահագործման ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, որը կիրականացվի

հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով։ Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով։

Հողաբուսական շերտի պահպանության նպատակով նախատեսվում է նախագծված հետախուզափորվածքների (մաքրվածք, հետախուզահոր, փորձնական հանույթի բացահանք) և փորձնական հանույթի անցման ժամանակ զգուշությամբ հանել հողի վերին շերտը /0,2մ հզորությամբ հողաբուսաշերտը/ և պահեստավորել տարածքում հատկացված հատուկ վայրում։ Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կատարել ոեկոլոգիկացիոն աշխատանքներ և պահեստավորված հողաշերտով վերականգնել լանդշաֆտը։

Ոեկոլոգիկացիոն աշխատանքների իրականացման համար ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 37000 <<դրամ գումար։

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող գործունեության տարածքում <<բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա։

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները։

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական իրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թերություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը։

- Օգտագործված յուղերի ու քայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուսումնական կամ երկրորդական վերամշակման համար։

- Հնամազ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն։

- Կենցաղային աղբի տեղափոխման մոտակա աղբահավաք կետեր։

- Արտաթրություն նյութերի չեղոքացուցիչ սարքերի տեղադրում։

- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային իրապարակները, ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին։ Ընկերությունը փոշենստեցման նպատակով ջրանն իրականացնելու է պայմանագրային հիմունքներով։

- Կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում։

- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում։

- Խախտված հողերի ոեկոլոգիկացիա։

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ։

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեղոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քայուղերով, հողերի հնարավոր-աղոտուումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ, տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,



- գետի ջրերի պղտորության մշտադիտարկումներ՝ աշխատանքների ընթացքում ամսական մեկ անգամ հաճախականությամբ :

Խաշթառակ համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են քնապահպահանության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրամշակման և լրակազմման:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված քնապահպահանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով քնապահպահանական բոլոր նորմերը:
3. Գործունեության իրականացման արդյունքում առաջացած թափոնների (օգտագործված յուղեր, քսայուղեր, հնամաշ դետալներ և այլն) կառավարումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում բացառել գետի հունի խախտումը, ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Վառմաշ>> ՍՊԸ կողմից ներկայացված Տավուշի մարզի Խաշթառակի ավագակոպճային խառնուրդի երևակումում 2019թ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետն

2. Զուտնաշյան

